

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
Զ. ԱՋԵՄՅԱՆԻ „ԱՅԲԲԵՆԱՐԱՆՈՎ“
ՊԱՐԱՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Զ. ԱՋԵՄՅԱՆ

491,99(077)

Ա- 47

ԼՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1939

18 MAY 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

491.99 (077)

Ա - 47

սթ.

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

**Զ. ԱՋԵՄՅԱՆԻ „ԱՅԲԲԵՆԱՐԱՆՈՎ“
ՊԱՐԱՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Զ. ԱՋԵՄՅԱՆ

Լ Ո Ւ Ս Հ Ր Ա Տ

ՅԵՐԵՎԱՆ

1939

10.549

6.02.2013

Պատ. խմբագիր՝ ԱՐՈՒՍՅԱԿ ԽԱՉԻԿՅԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
 Սրբագրիչ՝ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
 Կոմ. սրբագրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ



4253
 34

Գլավլիտի լիազոր է—2296, պատվեր № 17, տիրաժ 600

«Քանաքեռի»-ի տպարան, Յերեվան, Լենինի 67.

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՑ- ՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԾՐՋԱՆ

Յերեխաների գրել-կարդալու գործը հեշտացնելու համար անհրաժեշտ է նախքան այբբենարանին անցնելը, առաջին 10-12 ուրը կատարել նախապատրաստական աշխատանքներ:

Ուսուցիչը ծանոթանում է յերեխաների հետ, պարզում նրանց պատրաստակա՞նությունը, վճիռ յերեխան ի՞նչ տառեր գիտե, ո՞վ կարդալ գիտե և ի՞նչ ձևով է կարդում: Խոսեցնում է նրանց, պատմել է տալիս նրանց ընտանիքի մասին, ամառվա մասին, ի՞նչ են տեսել անտառում, գետի մոտ, այգում, դաշտում: Ի՞նչ խաղեր են խաղացել, ո՞ւմ և ի՞նչ աշխատանքում են ոգնել: Արտասանել է տալիս նրանց գիտեցած վոտանավորները, զրույց է ունենում զանազան նկարների շուրջը:

Այսպիսով ուսուցիչը ծանոթանում է յերեխաների խոսելու կարողության հետ:

Յերեխաներին կենտրոնացած և ուշադիր լսել սովորեցնելու նպատակով, ուսուցիչն ինքն էլ է պատմում, անց է կացնում բարձրաձայն ընթերցանություն և զրույց կարդացածի մասին:

Միաժամանակ անհրաժեշտ է յերեխայի ձեռքը վարժեցնել գրելու համար: Այդ նպատակով այբբենարանին կից տրվում է մի փոքր լրացուցիչ տետր դիպակտիկ նյութերով: Տետրի առաջին 6 էջերում կան մրգերի, յերկրաչափական պատկերների կոնտուրային նկարներ և գծագրումներ վանդակավոր թերթերի վրա:

Ուսուցիչը տանը գունավոր մատիտներով ներկում է այդ նկարները և որը մեկը բերում դասարան: Յերեխաները դիտում են նկարը, վորոշում գույները և իրենք էլ գունավորում իրենց տետրում յեղած նկարը կանոնավոր շտրիխներով, աշխատելով կոնտուրից դուրս չգալ:

Կարելի յե և զանազան տերևներից նախշեր կազմել ու ներկել: Յերեխան բնական տերևվը դնելով տետրի թերթին, շուրջը մատիտով գծում է և տերևը հեռացնելով, ստացած կոնտուրային նկարը գունավորում:

Նույն յեղանակով կարելի յե ոգտագործել կտրվածքներ սովորաթղթից՝ յերկրաչափական պատկերներ, առարկաների, մրգերի ձևեր, կենդանիների կերպարանքներ (մուրճ ու մանգաղ, աստղ, խնձոր, տանձ, ձու, մուկ, նապաստակ և այլն): Կտրվածքները (шаблонки) ուսուցիչն ինքը պետք է տանը պատրաստի:

Կոնտուրային նկարները գունավորելով յերեխաները սովորում են գծեր տպնել վորոշ սահմաններում, վարժեցնում են ձեռքը և մատները, գրելու համար, իսկ աչքը՝ անալիզ կատարելուն:

Այբբենարանի առաջին էջերին տված են ինքնուրույն գծելու վարժությունների նշումներ, նախ կոր, ապա՝ ուղիղ և թեք գծերով: Ուսուցչի ցույց տը-

ված որինակով յերեխաները նկարում են մրգեր, ձկներ, թռչնիկներ: Նկարի շուրջը գծում են շրջանակ, վերջինը զարդարում բորդյուրներով, վորոնց նմուշները նույնպես տված են այբբենարանում:

Ուղիղ և թեք գծերով նախնական վարժություններ կատարելուն ոգնում են քառակուսի վանդակավոր տետրերը: Այբբենարանում տված նմուշներից ուսուցիչը գծում է զրատախտակի վրա (պետք է ունենալ վանդակավոր գրատախտակ), յերեխաներն ընդորինակում են:

Նման աշխատանք կատարելիս անհրաժեշտություն է ծագում վորոշելու գծերի դիրքը, տեղն ու ուղղությունը (աջ, ձախ, վերև, ներքեվ, կանգնած գիծ, պառկած գիծ, թեք գիծ):

Վանդակավոր տետրերում մի շարք վարժություններ կատարելուց հետո, պետք է անցնել չորս տողանի տետրերում տառերի ելեմենտներ գրելուն:


Դասարանում իհարկե պետք է լինի չորս գծանի ցանցավոր գրատախտակ, տողի առաջին և չորրորդ գծերն ավելի հաստ, քան յերկրորդը և յերրորդը:

Յերեխային պետք է վարժեցնել ճիշտ վորոշելու տողը, գիծը, գծամեջը:

Գծամեջերով է պարզվում տառի և նրա ելեմենտների մեծությունը: (Տողն ունի 4 գիծ, վորոնք կազմում են 3 գծամեջ, Յերկու տողերի արանքում թողնելով է մի գծամեջ):

Ըստ մեծության տառերի ելեմենտները, հետո էլ տառերը պետք է բաժանել 4 խմբի և ամեն մի խմբին, յերեխային հասկանալի մի անուն տալ՝ փոքր, մեծ, նստած, կախված (որինակ՝ ա, ի, ե, ը տառերի առաջին ելեմենտները):

Ըստ ձևի ելեմենտները կարելի չե բաժանել մի քանի հմնական տեսակի. գիծ, կարթ, յերկգլխանի կարթ, ձեռնափայտ, ողակ (գծ. 1):



ԳՄ. 1.

Ելեմենտներից ամեն մեկը կարող է լինել 4 չափի (փոքր, մեծ, նստած, կախված):

Յերբ յերեխաները վարժվեն ուսուցչի պահանջով գրել դանազան ձևի և մեծության ելեմենտներ, նրանց համար շատ հեշտ կլինի տառ, ապա և բառ գրելը: Որինակ՝ վ տառը գրելիս, կարելի չե հոշել,— գրի մի փոքր կարթ, նրան միացրու մի մեծ կարթ:

Ամեն մի ելեմենտից կարելի չե յերեխաներին գրել տալ 1—3 տող:

Այս աշխատանքներին զուգընթաց շարունակվում է յերեխայի խոսելու ունակության զարգացումը:

Յերեխաները պատմում են, լսում ուսուցչի կարգացածը և նրա բառերով անգիր վոտանալուներ արտասանել սովորում:

Սկսում են խոսքի և բառի անալիզն ու սինթեզը:

Շատ պարզ ձևով ուսուցիչը յերեխաներին հասկացնում է, վոր մենք խոսում ենք բառերով: Վերցնում է յերեխաներին մատչելի նախադասություններ, հարմար նկարներով:

Սկզբի շրջանում լավ կլինի խոսափել եյական բայերից և շղկապներից:

Որինակ՝ ուսուցիչը տալիս է յերեխաներից մեկի անունը.

—Արամ:

Արամը լսում է, բայց չգիտի ինչ անի: Ուսուցիչը շարունակում է.—

—Արամ, արի:

Արամը մտեհնում է:

Ուսուցիչն արտասանում է բառերն առանձին, առանձին, ձայնի ընդմիջումով և ձեռքը շարժելով:

«Արամ, արի» (ձեռքը յերկու անգամ շարժում է) Թմնի բառ ասացի:

Յեթե յերեխաները զժվարանում են, ուսուցիչն ինքն է ասում.—

—Յես ասացի յերկու բառ, «Արամ, արի»: Վորն է առաջին բառը:

Ուսուցիչն ասում է, յերեխաները կրկնում են:

Վորոշում են յերկրորդ բառը, կրկնում են:

Կազմում են նոր նախադասություններ. «Արամ գնա», «Արամ նստի», «Կիմ, դուռը բաց», «Անիկ, գրատախտակը սրբիր»: «Կազմեն ընկալ» և այլն:

Դիդում են նկարներ և փոքրիկ նախադասություններով արտահայտում նրանց բովանդակությունը:

Դիդակտիկ նյութերի տեսքում տված է 2 զվարձալի նկար:

Յերեխաները նախ լուռ դիտում են նկարը, ապա ուսուցիչն սկսում է պատմել շատ կարճ նախադասություններով, ցույց տալով նկարի համապատասխան մասերը:

ՅԵՐԿՈՒ ՎԻԻԱՍ ԱԻ ԺԻՏԻԿ

Ուսուցիչը ձեռքի մի շարժումով ցույց ե տալիս
ամբողջ նկարը:

I Նկար. — Փխոն տեսավ ծիտիկին, —

ցույց ե տալիս ձախ կողմի կատուն և ծիտիկը, —

«Բռնեմ, ուտեմ», — ասաց փխոն:

— Նռնոն տեսավ ծիտիկին, —

ցույց ե տալիս աջ կողմի կատվին և ծիտիկին, —

«Բռնեմ, ուտեմ», — ասաց Նռնոն, —

— Ծիտիկը տեսավ փխսիկներին:

«Շուտ թռչեմ, ապատվեմ», ասաց ծիտիկը:

II Նկար. — Փխոն ցատկեց:

Նռնոն ցատկեց:

III Նկար Փխոն բռնեց Նռնոյին:

Նռնոն բռնեց փխսիկին:

Ծիտիկը թռավ ապատվեց:

Ուսուցչի մի անգամ պատմելուց հետո յերեխա-
ները նույնութամբ կրկնում են և առանձին նախա-
դասությունները վերլուծում բառերի:

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՎԱՐՃԱԼԻ ՆԿԱՐ

Փխոն ու պառավը

(Ցույց ե տալիս ամբողջ նկարը)

Պառավը քնեց: (Ուսուցիչը ցույց ե տալիս նկա-
րի առաջին մասը):

Փխոն կծիկը գլորեց: (նկարի յերկրորդ մաս):

Գլորեց, վազեց: (3-րդ մաս)

Գլորեց, վազեց: "

Կծիկը կորավ: (4-րդ մաս):

Փխոն զարմացավ: "

Յերեխաները կրկնում են առանձին նկարները
մասին ասված նախադասությունները, բաժանում են
բառերի, այսինքն կատարում են լսողական անալիզ,
վորից հետո, ուսուցչի առաջարկով, վորոշում են, թե
նկարը քանի մասից ե կազմված, վորտեղից ե սկսվում
պատմվածքը և ի՞նչ ուղղությամբ ե շարունակվում:

(Նկարը 4 մասից ե բաղկացած, պատմվածքն սկսվում
ե վերևի 2 նկարով, նախ ձախ, հետո՝ աջ, Շարունակ-
վում ե ներքևի նկարներով. սկզբում՝ ձախ, հետո՝ աջ):

Նկարի այս ձևի (տեսողական) անալիզը վարժե-
ցընում ե աչքն ամբողջի մասերը տեսնելուն և նախա-
պատրաստում ե գրել—կարգալու ճիշտ ուղղությունը
պահպանելուն. ձախից՝ աջ, վերևից՝ ներքև:

Քանի վոր վերև հիշված նկարների շուրջը կա-
տարած աշխատանքի հիմնական նպատակն անալիզն
ե, նկարի բովանդակությունն սկզբում անպայման
ինքն ուսուցիչն ե պատմում, կարճ նախադասություն-
ներով: Սակայն անալիզը կատարելուց հետո կարելի
յե տեղ տալ նաև յերեխայի խոսքի և յերևակայու-
թյան զարգացմանը: Կարելի յե առաջարկել յերեխա-
ներին ավելի յերկար պատմել, տալով նրանց ոժա-
ղակ հարցեր: Որինակ՝ «Փխոն ու պառավը» նկարի
անալիզը կատարելուց հետո, ուսուցիչը կարող ե հարց-
նել. — ի՞նչ ե յեղել պառավի քնելուց առաջ, հետո
ի՞նչ կլինի, յերբ պառավը զարթնի և տեսնի վոր,
կծիկը չկա: Կբարկանա՞ն փխսիկի վրա, թե՞ կծիծաղի:

Յերբ յերեխաներն արդեն լավ յուրացրել են
նախադասությունը բառերի բաժանելը, պետք ե անց-
նել բառը վանկերի բաժանելուն:

Ուսուցիչն այդ կատարում է նախ ինքը: Մի շարք յերկվանկանի բառեր արտասանում է վանկերի բաժանած, ամեն վանկի համար կատարելով ձեռքի մի շարժում: Յերեխաները նայում են և լսում: Ուսուցիչն առաջարկում է յերեխաներին արտասանել նույն բառերը, բաժանելով մասերի, համաձայն իր ձեռքի շարժման: Յերե յերեխաները վարժվում են այդ ձևով բառը վանկերի բաժանելուն, ուսուցիչն արտասանում է բառի առաջին վանկը, առաջարկելով լրացնել բառը:

Որինակ՝ ցույց է տալիս ձեռքի մատիտը, ասում վա, յերեխաները լրացնում են.— *սիս*: Վորոշում են բառի առաջին և յերկրորդ վանկը: հետո ուսուցիչն առաջարկած բառերն իրենք յերեխաներն են բաժանում վանկերի, արտասանում են առաջին վանկը, յերկրորդը, յերկուսը միասին:

Բառը վանկերի բաժանելը լավ յուրացնելուց հետո պետք է անցնել հնչյունների առանձնացմանը:

Ուսուցիչը հարցնում է յերեխաներին, թե նրանք ի՞նչպես են հասկանում դասի սկսվելը կամ վերջանալը: Յերեխաները պատասխանում են, վոր գանգի ձայն են լսում:

—Իսկ փողոցով անցնելիս, վորպեսզի մարդիկ չընկնեն տրամվայի, ավտոյի կամ կառքի տակ, ինչպես են նրանց զգուշացնում:

Յերեխաները պատասխանում են.—միլիցիոնները սուլում է տրամվայի զնգզնգոցն և լսվում ավտոյի շրջակն և զգուշացնում, կառապանը կանչում է «Ե՛յ, Է՛յ»:

Յերեխաները փորձում են նաև արտասանել քամու ձայնին, գնացքի սուլոցին նմանող հնչյուններ:

Ձայնները շատ են և տարբեր: Կենդանիներն այլ ձայնի են հանում, թռչուններն այլ:

Մենք ել խոսելիս զանազան ձայներ—հնչյուններ ենք արտասանում:

Ուսուցիչը բերում է որինակներ, վորտեղ արտասանվում են առանձին ձայնավոր հնչյուններ:

—Եղիկի համար դաշնամուր են գնել: Նա սովորում է յերգել և նվագել: Յերգի ուսուցչուհին մատներով խփում է դաշնամուրի ստեղներին: Եղիկը յերգում է *ամ, ամ, ամ*:

Ի՞նչ է յերգում Եղիկը.—

—*ամ ...*

—*ա հնչյուն է:*

—Արան աթոռները իրար մոտ շարել, գնացք է խաղում: Նա աշխատում է գնացքի նման կանչել.— *սև, սև*:

Ի՞նչ է կանչում Արան.—

—*Ո՛ւ, սև...*

—*ու հնչյուն է:*

Սուրիկը դաս է սովորում: Արայի ձայնը խանդարում է նրան. «Ե՛, Արա, դե բավական է, Է՛» ասում է Սուրիկը:

—Սուրիկը ի՞նչ է ասում.—

—*Ե՛ ...*

—*Ե—հնչյուն է:*

«Ո» և «ի» հնչյուններն առանձնացնելիս կարելի չե ցույց տալ տերևներ, վորոնցից պետք է ընտրել նկարելու համար: Ուսուցիչը ցույց է տալիս մի գեղեցիկ տերև և ասում է .—

—*Ո՛, ինչ գեղեցիկ է:*

—*Ո՛—հնչյուն է :*

Յուշց ե տալիս մի ուրիշ չորցած տերև.

—Ե,—սա չարժ ե նկարել:

—Ի—հնչյուն ե:

Ուսուցիչն արտասանում է առանձնացրած ձայնա վորները՝ ա, ու, ո, ե, ի, ը: Ինքն արտասանում է, առաջարկում է յերեխաներին կրկնել: Ամեն մի հնչյունն արտասանելիս, յերեխաների ուշադրությունը դարձնում է իր բերանի վրա:

ա—արտասանելիս,—բերանը լայն բացված ե:

ո—արտասանելու ժամանակ շրթունքները

ձգվում են առաջ և բերանը կտր ձև ե ընդունում:

Ու՛ի համար շրթունքներն ել ավելի յեն ձգվում, բերանը բոլորովին սրվում ե:

Ի—արտասանելիս շրթունքները հետ են գնում:

Յերեխաներն այդ բոլորը տեսնում են ուսուցչի արտասանելիս և զգում են, յերբ իրենք են արտասանում հնչյունը:

Ուսուցիչն անձայն, միայն բերանի շարժումով հասկացնում է յերեխաներին, թե ի՞նչ հնչյուն ե ուզում, վոր իրենք արտասանեն, յերեխաները հասկանում և արտասանում են:

Ուսուցիչը յերեխաներին լռեցնելու համար արտասանում է «ս» հնչյունը:

Կատարում են առա բառի վերլուծումը վանկերի՝ ա—սա:

Առաջին վանկն ե ա, յերկրորդը՝ սա:

Պարզում են քանի հնչյունից ե կազմված առ վանկը: Ուսուցիչը մի փոքր յերկարացնում է առաջին հնչյունը, իսկ յերկրորդն արտասանում ե կարճ.—

—Սս՛ա:

Վորոշում են առաջին հնչյունը՝ ա, յերկրորդը՝ ա: Արտասանում են յերկու հնչյունը միասին՝ սա:

Մտածում են ա հնչյունով սկսվող բառեր: Սով սկսվող բառեր: Բառեր, վորոնց մեջ կա ա հնչյունը, ա հնչյունը:

Կատարում են և ուրիշ բառերի անալիզ, նախ բառը բաժանելով վանկերի, ապա վանկը՝ հնչյունների:

Վանկի մեջ պայթող բաղաձայն լինելու դեպքում, ուսուցիչն ինքն արտասանում է տվյալ վանկը, յերկարացնելով ձայնավորը և յերեխաների ուշադրությունը հրավիրելով իր բերանի վրա:

Որինակ՝ ուսուցիչն արտասանում է «տո՛ւուն» և յերեխաների ուշադրությունը դարձնում է այն հանգամանքի վրա, վոր նախքան յերկար ո՛ւ արտասանելը լեզուն խփում ե ատամներին, իսկ ու արտասանելուց հետո՝ լեզուն սեղմում ե ատամներին:

Յերեխաները փորձում են իրենք ևս արտասանել նույն բառը, զգում են լեզվի շարժումները և համոզվում, վոր կան հնչյուններ, վորոնք առանձին—առանձին դժվար են արտասանվում:

Այդ դժվար արտասանվող հնչյունները բաղաձայններ են:

Այն հնչյունները, վորոնց արտասանելու ժամանակ ողն ազատ անցնում ե բերանի միջով, առանց վորեւ արգելքի հանդիպելու, կոչվում են ձայնավորներ:

Ա, ո, ու, ե, ի, ը,—ձայնավորներ են:

Բաղաձայնները միայն ձայնավորների հետ են հեշտ արտասանվում:

Յերբ յերեխաները բավականաչափ վարժվեն անալիզի, այսինքն, նախադասությունը՝ բառերի,

բառը՝ վանկերի, վանկը՝ հնչյունների վերլուծելու և վանկի մեջ ձայնավորն առանձնացնելուն, յերբ յուրացրել են նախադասութիւն, բառ, վանկ, ձայնավոր, բաղաձայն տեղիքները, պետք է անցնել գրաճանաչութեանը:

ԳՐԵԼ—ԿԱՐԴԱՆՈՒ ՌԻՍՈՒՅՈՒՄԸ

Այբբենարանի ամեն մի եջին տարվում է մի նկար, տակին համապատասխան բառը շրջանակի մեջ գրված: Այդ բառի տառերն իրարից բավականին հեռու յեն գրված, վորպեսզի հնարավոր լինի կատարելու անալիզ՝ տեսնելու բառի բաղադրիչ մասերը,—տառերը:

Շրջանակը ցույց է տալիս, վոր այդ տառերը միացվում են բառ կազմելու համար՝ կատարվում է սինթեզ:

Նոր տառը տրվում է վերլուծած բառի սկզբում:

Հետո տրվում է վանկերի բաժանած մի շարք բառեր, վորտեղ նոր տառը պատահում է և՛ բառի սկզբում և՛ միջում, և՛ վերջում:

Այդ բառերի շուրջը յերեխաները կատարում են անալիզի, շարժական տառերից բառեր կազմելու և կարգալու վարժություններ, վորոնք ոգնում են հաջորդ փոքրիկ նախադասությունները և կապակցված տեքստը կարդալուն:

Եջի ներքևի մասում տրվում են գրելու որինակներ. տառի ելմենտներ, տառ, բառ, փոքրիկ նախադասություններ:

Նոր հնչյունի առանձնացնելը և ընդհանրապես ընթերցումը յերեխաների համար հեշտացնելու նպատակով, այբբենարանում սկզբնական շրջանում տրվում

են միայն այնպիսի բառեր, վորոնք կազմված են ձայնավորներից և յերկարող բաղաձայններից:

Նոր տառն ըստ հնարավորութեան տրվում է կոնկրետ նկարով արտահայտող բառում, բացառութեամբ, «որ» «շոր», «չիլ» բառերի, վորոնք այնքան ել չեն համապատասխանում նկարին, բայց ունեն ուրիշ առավելություններ բառերը կարճ են, տառերը՝ կոնտրաստիկ, հնչյունները՝ յերկարող:

Վորպեսզի յերեխաները հեշտութեամբ ըմբռնեն նկարի և բառի կապը, կարդալուց առաջ պետք է տանել նախապատրաստական զրույց:

Որինակ՝ «որ» անցնելիս կարելի յի զրույց ունենալ որվա ռեփիմի մասին:

«Շոր» անցնելիս կարելի յի խոսել շորերի մաքրութեան մասին:

Ընդհանրապես նոր հնչյունի և համապատասխան տառի ծանոթացումն սկսվում է զրույցով նկարի կամ առարկայի դիտելու կապակցութեամբ:

Կենդանի խոսքից առանձնացվում են այն նախադասություններն ու բառերը, վորոնց շուրջն աշխատանք է տարվելու դասի ընթացքում:

Լսողութեամբ բառը՝ վանկերի և վանկը հնչյունների բաժանելով, առանձնացվում է նոր հնչյունը:

Ուսուցիչը բացատրում է, վոր ամեն մի հնչյուն ունի իր՝ պատկերը, ցույց է տալիս նոր տառը:

Յերեխաները մտածում են այդ տառով բառեր: Իրենց հատվող այբբենից կտրում են այդ որն անցած տառը, շարում են վերալուծած բառը, կարդում, նոր բառեր են կազմում՝ կարդում: Նման վարժութեաններ կատարելուց հետո միայն, կարգում են այբբենարանի համապատասխան նյութը:

Հաճախ յերեխան գրքի տեքստն անգիր է կարդում: Պետք է պահանջել կարգալ տեքստից առանձին նախադասութիւններ կամ բառեր.—կարդա առաջին տողը, 5-րդը, 2-րդը, գտիր այս ինչ բառը, ցույց տուր:

Կարգացածն անհրաժեշտ է ցույց տալ, բայց վոչ մատով, ավելի նպատակահարմար է սրածայր փայտիկով:

Նոր դասը կարգալուց հետո յերեխաները պետք է սովորեն գրել:

Ուսուցիչը գրանտախտակի վրա գրում է նոր տառը, բաժանում ելեմենտների նորից միացնում:

Յերեխաները նայում են, գրում են նախ ողում ձեռքի շարժումով, հետեւելով ուսուցչի տակտին: (Ուսուցիչը գրում է հաշվելով տառի ելեմենտները.—մեկ յերկու, յերեք ...) Հետո գրում են տետրերում: Նախ վոքըրատառը, հետո այդ տառով բառեր, ապա մեծատառը և նրանով սկսվող բառեր:

Ամեն անգամ ուսուցիչը գրատախտակի վրա ցույց է տալիս ինչպես գրել:

Այբբենարանում ամեն մի եջի վերջում կա գրավորի որինակ: Այնտեղ փոքրատառը և մեծատառը մի տողի վրա յեն տրվում, վոր յերեխան հեշտությամբ համեմատի և տեսնի նրանց նմանութիւնը և տարբերութիւնը: Սակայն պարտադիր չէ, վոր տետրում էլ նույն հաջորդականությամբ գրեն:

Յերեխաներին պետք է վարժեցնել մեծատառ գործածելուն վոչ միայն հատուկ անունների սկզբում, այլ և վերջակետից հետո, նախադասութեան սկզբում: Գրաճանաչութեան սկզբնական շրջանում, յերբ յերեխաները դեռ չեն կարողանում ամբողջ նախադասութիւններ գրել, առանձին, կապ չունեցող բառերից

հետո էլ տված են վերջակետեր հաջորդ բառը մեծատառով սկսելու նպատակով:

Տառերի չափը, հաջորդականութիւնը և ձևը յերեխային ավելի նկատելի դարձնելու համար, լավ կլինի, վոր յերեխաները նախքան տետրում գրելը, սրածայր փայտիկով, կամ չոր չթաթախած գրիչով գծեն գրքում տված գրավոր որինակի վրայով, ուսուցչի հրահրությամբ այնպես ինչպես գրվում է,—ձախից, աջ, վերևից՝ ներքև:

Գրաճանաչութեան հենց սկզբից պետք է հետապնդել յերեխաների ճիշտ, անսխալ գրելուն:

Յուրաքանչյուր գրավոր աշխատանք պետք է կատարել գեղագրութեան ծրագրի պահանջների հիման վրա:

Յերեխաներին արտադրելուց բացի պետք է վարժեցնել և լսածը գրելուն: Սկզբնական շրջանում, յերբ նրանք դեռ արագ գրել չգիտեն, ուսուցչի առաջարկած բառերը վերլուծելուց հետո շարում են շաբաղան տառերից և կարգում: Հետագայում ուսուցչի թելադրածը գրում են իրենց տախտակների վրա: Գրում են նաև գրատախտակին:

Ինքնուրույն գրել սովորեցնելու նպատակով, այբբենարանում տեղ-տեղ տրվում են նկարներ, տակերին անունները գրած, բայց վոչ լրիվ: Յերեխաներն արտագրում են այդ անուններն իրենց տախտակների վրա, բաց թողած տառերը լրացնելով:

Բոլոր տառերն անցնելուց հետո, մեծատառերի կրկնելուն շատ նպաստում է անունների խաղը: Ուսուցիչը յերեխաներից մեկի անունը գրում է գրատախտակին, յերեխաները լուռ կարդում են, անվան տերը գալիս, մեկ ուրիշի անունն է գրում ու նստում,

4253
39



դա եւ գալիս՝ իր ցանկացած ընկերով անունն ե գրում
և այդպէս շարունակում են: Միտալ գրած անունն ու-
սուցիչը ջնջում՝ ինքն ե գրում: Խաղը տարվում ե լուռ:

Խաղ—վարժութիւնների համար այբբենարանի
վերջում կա տառերի աղյուսակ, վորտեղ տառերը դա-
սավորված են 6 շարքով. ամեն շարքում 6 տառ: Տա-
ռերի հորիզոնական ուղղութիւնները կարելի յե ան-
վանել կարգեր, իսկ ուղղահայացները՝ շարքեր (գծ. 2):
Բոլոր տառերն անցնելուց հետո, կարելի յե ոգտա-
գործել աղյուսակը:

I	ա	բ	գ	դ	ե	զ
II	ը	թ	ժ	ի	լ	խ
III	ժ	կ	հ	ջ	ղ	ծ
IV	՛	յ	ն	շ	ռ	չ
V	ւ	գ	ռ	ս	վ	փ
VI	բ	յ	ռ	փ	ժ	ժ

Գծ. 2.

Որինակ՝ ուսուցիչն ասում ե.—

—Յեա մտքումս մի բառ եմ պահել, նրա առա-
ջին տառը գտնվում ե V կարգում, յերկրորդ շարքում:

Յերեսները հաշվում են վերեւից՝ ներքե 5,—
ձախից—աջ՝ յերկուս, գտնում են ջ տառը և լուռ գրում:

Ուսուցիչը շարունակում ե.—

—Յերկրորդ տառը կգտնեք VI շարքի, յերրորդ
կարգում:

Յերեսները գտնում են ա տառը, գրում:

—Վերջին տառը VI շարքի, առաջին կարգում ե
գտնվում:

Յերեսները բառը լրացնում են ք տառով և
կարգում ջուր:

Կարելի ե տարբեր ձևերով տանել խաղը: Յերե-
սաներից մեկին դուրս են ուղարկում, ֆնացածներն
ընտրում են բառ, ներս կանչում դրսի յերեսային և
առաջարկում իրենց մտքում պահած բառը գտնել,
վերե հիշված յեղանակով:

Խաղի ժամանակ կատարյալ լուռթյուն պահա-
նելու նպատակով, կարելի յե տառերի տեղերը գրել
թվանշաններով: Որինակ՝ առաջարկվում ե գտնել այն
բառը, վորի տառերը գտնվում են IV-3, I-1, V-5 տե-
ղերում. դա կլինի նալ:

Միաժամանակ պետք ե հետեւել և յերեսային
բանավոր խոսքի զարգացմանը: Այդ նպատակով կա-
րելի յե ոգտագործել այբբենարանում տված անկապ
բառերը: Սկզբնական շրջանում անկապ բառեր կար-
գալուց և նրանց մեջ գտնված նոր տառը վորոշելուց
հետո, յերեսներն ուսուցչի ոգնությամբ կազմում են
փոքրիկ նախադասութիւններ, վորտեղ պետք ե լինեն
կարգացած բառերը:

Որինակ՝ անցնում են ի տառը: Կարգում են միս,
ամիս, շիշ, մատիտ և այլն անկապ բառեր, կազմում
են նախադասութիւններ. «Շուկնը միս ե ուտում»:

«Մայրիկը մի օրէ կաթ գնեց»: «Լուսիկը կարմիր մաշիս ունի»:

Հետագայում կարելի յե կաղմել ամբողջ պատմը վածքներ: Տվյալ որը կարգացած անկապ բառերից մի քանիսն ուսուցիչը գրում ե գրատախտակին և առաջարկում յերեխաներին լուռ կարդալ և մտածել պատմվածք, վորտեղ լինեն այդ բառերը: Յերեխաները մտածում են, մատ են բարձրացնում ու պատմում: Ուսուցիչն ոգնում ե նրանց: Որինակ՝ անցել են ք տառը, կարդացել են այդ տառով անկապ բառեր: Ուսուցիչը գրում ե այդ բառերից գրատախտակին.— Սաքիկ, ուր, քար, քանափ, քարան, առաջարկում ե կարդալ և լուռ մտածել պատմվածք: Յերեխաներն սկզբում կարող ե գլխի չընկնեն, թե իրենցից ի՞նչ ե պահանջվում: Ուսուցիչն ոգնում ե: Նա պատմում ե իր մտածածը.

—Սաթիկ մորաքույրը Եւր մետր քարան ե առնում, բերում տուն, դնում սեղանի վրա: Թամարը գալիս ե դպրոցից, գրքերն ու թանաքամանը դնում ե քաթանի մոտ: Փխիկը բարձրանում ե սեղանին, քարով խփում թանաքամանին: Թանաք թափվում ե նոր գնած քաթանի վրա...

—Հետո, յերեխաներ ի՞նչ ե լինում, մտածեցեք:

Յեթե յերեխաները դժվարանում են պատասխանել, ուսուցիչն օժանդակ հարցեր ե տալիս: Պարտադիր չե, վոր տված բառերը միայն հիմնական ձևով գործածվեն: Որինակ՝ գրատախտակին գրված ե քաթ բառը,—յերեխաները կարող են ասել.—քարով խփեց:

Նման վարժությունները սովորեցնում են յերեխաներին ըմբռնելու բառերի իմաստն ու նշանակութիւնը:

Յերեխաների սրամտությունը զարգացնելու և գիրքը հետաքրքրական դարձնելու նպատակով այլ բնարանում տրվում են շուտասեւեռներ և հանելուկներ:

ԱՅԲԲԵՆԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Տ Ա Ռ Ե Ր Ի Հ Ա Զ Ո Ր Դ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ԱՅ	Բառ	Տառ	Ծանոթություն	ԱՅ	Բառ	Տառ	Ծանոթություն
1	—	ա		24	գիրք	գ	2 բաղաձայն բառի վերջ.
2	—	ս		25	զանգ	զ	
3	սար	ր		26	լսող	լս	
4	որ	ո		27	վարժութ.	բաղաձայնների	
5	շոր	շ		28	յեղ	յ	կուտակումով
6	ե2	ե		29	ցախ	ց	
7	լոր	լ		30	ծամացույց	ծ	
8	ուլ	ու		31	վարդ	վ	
9	շուկ	ն		32	Խ ո Ր ա ց ու մ		
10	Անցածի խորացում			33	ջուր	ջ	
11	տուն	տ		34	հավ	հ	
12	կատու	կ		35	չիւր	չ	
13	մուկ	մ		36	պապ	պ	
14	Անցածի խորացում			37	քաղիւր	ք	
15	իլիկ	ի	առաջին անգամ բաղաձայնների կուտակում բառի միջում	38	հրկնվող	բաղաձայններ	
16	ընկեր	ը		39	ծառ	ծ	
17	էար	է		40		ւ	
18	վարժությունները տառով			41	մանճ	մ	
19	մաղ	ղ		42	ձու	ձ	
20	քութ	ք		43	փիղ	փ	
21	բուն	բ		44	Անցածի խորացում		
22	վարժութ. 2 բաղաձայն			45	փուրգոն	փ	
23	դրոշակ	դ	բառի սկզբ.				

Նոր տառը տրվում է բառի սկզբում, բացի յե-
րեքից: Բառերն ըստ հնարավորութեան կարճ են:

Առանձին հնչյունով տրվում է 2 տառ.

2 տառից կազմված բառերով՝ 4 տառ.

3 տառից բաղկացած բառերով՝ 19 տառ.

4-ից « « « 6—

5-ից « « « 2—

6-ից « « « 2

8-ից « « « 1

Ընդամենը 36 տառ.

Ամեն մի տառի հատկացված է մի եջ, բացի այդ
9 եջ տված է խորացման և բաղաձայնների կուտա-
կուսմանը յուրացնելու համար:

Յերկու բաղաձայնի հանդիպումը նախ տրվում է
բառի միջում, յերբ բառը վանկերի բաժանելով, ամեն
մի վանկում ստանում ենք մի բաղաձայն: Որինակ՝
ըն—կեր, կար—միր:

Հետո տրվում է 2 բաղաձայն բառի սկզբում,
յերբ մի բառի սկզբից ավելացնելով վորոշ բաղաձայն
ստանում ենք նոր բառ. որինակ՝ կար, ճկար:

Դրանից հետո տրվում է յերկու բաղաձայն բա-
ռի վերջում—որինակ՝ գիր—գիրք:

Առանձին եջ է հատկացված կրկնվող բաղաձայն-
ներին,—Աննա, Եմմա տիպի բառերով:

Այբբենարանի վերջին մասում տրվում են նաև
բառեր 3 բաղաձայնների կուտակումով:

Յերեքսաները պետք է վարժվեն և նման դժվա-
րություններ հաղթահարելուն: Այդ տիպի բառերը
վանկերի բաժանելիս (մղկորատ) ստացվում են ը—ով
վանկեր, սակայն ամեն անգամ պետք է շեշտել, վոր
այդ ը—ն ամբողջ բառի մեջ չի գրվում:

ԴԱՍԻ ԴԱՆԻ ՍԻՆՍԱ

(2 ժամ)

I. Անցած դասի կրկնություն:

II. Նոր հնչյուն և տառ (—):

1. Նախապատրաստական զրույց:
2. Նոր տառով սկսվող բառի առանձնացում:
3. Բառի վերլուծումը վանկերի և հնչյունների:
4. Ծանոթ հնչյունների և ապա նոր հնչյունի առանձ-
նացում:
5. Նոր տառի ցուցադրում ուսուցչի կողմից և նրա
կարելի յերեխաների հատվող ալբերենից:
6. Նոր տառով բառեր մտածել:
7. Շարժական տառերով նոր բառը շարել:
8. Շարժի ընթերցում:
9. Վարժությունների շարժական տառերով:
10. Բանավոր խոսքի զարգացում:
11. Այբբենարանի համապատասխան եջի ընթերցում:
12. Դրավոր աշխատանք: Դրել անցած տառը, բառեր
այդ տառով: Մեծատառը:
13. Իրենց գրածի ընթերցում:

ԱՇԽԱՏԱՆԲ ՇԱՐժԱԿԱՆ ՏԱՌԵՐՈՎ

Շարժական տառերից վանկեր և բառեր կազմե-
լիս, դիրկապը կանխելու նպատակով, պետք է հա-
տուկ ուշադրություն դարձնել, վոր յերեխան ամբողջ
վանկը միանգամից կարդա, այդ հնարավոր է, յեթե
յերեխան վորոշում է ձայնավոր տառերը:

Փորձենք արտասանել միևնույն բաղաձայնով
սկսվող վանկեր. մա, մու, մո, մե, մր,—բոլոր դեպ-

քերում ել մենք «մ» հնչյունը դեռ չարձանանա՞ծ, բե-
րանը նախապատասխանում ենք հաջորդ ձայնավորն ար-
ժանանելուն: Բոլոր դեպքերում ել մինչ վանկն արտա-
սանելը բերանը փակ է, սակայն մեա արտասանելուց
առաջ շրթունքները հպած են իրար, մեա արտասանե-
լու համար, դեռ բերանը փակ դիրքում, շրթունքները
ձգվում են առաջ, նախապատրաստվելով ու-ի համար:

Յեթե բերանը չնախապատրաստենք տվյալ վան-
կի համար, «մ» հնչյունը կարտասանվի ողի մի հարվա-
ծով, հետո ձայնավորը՝ յերկրորդ հարվածով և կստաց-
վի գերկապ:

Ուրեմն յերեսան նախ քան բաղաձայնն արտա-
սանելը պետք է անպայման ճեղքի, ըմբռնի, նախա-
պատասխանի հաջորդ ձայնավորն արձանանելուն յեվ
միանգամից ամբողջ վանկն արձանանի:

Այս աշխատանքը հեշտացնելու նպատակով, հատ-
վող այբբենում ձայնավոր տառերը տված են կարմիր
գույնով: Յերեսաներին հենց սկզբից պետք է հաս-
կացնել, վոր կարմիր տառերը ձայնավորներ են: Նը-
րանք առանձին ել կարող են վանկ կազմել: Սևերը
բաղաձայն են, նրանք առանց կարմիր տառի դժվար
են արտասանվում: Յերը փորձում ենք նրանց առան-
ձին արտասանել, միանում են «ը» կարմիր ձայնավո-
րին: Որինակ. «սը», «կը», «չը» ասելիս յերկու հնչյուն
ե լսվում:

Առանձին վանկեր կազմելու և նրանց արագ կար-
դալու վարժություններ կատարելու համար, հատվող
այբբենի հետ տված է ձայնավորների տախտակներ,
վորոնց վրա դասավորված են բոլոր ձայնավորներն
իրար տակ, վանդակներում: Ամեն մի ձայնավոր տա-

ռի աջ և ձախ կողմերում գտնվում են մեկական բաց
վանդակ (գծ. 3):

Նոր անցած շարժական բաղաձայն տառը տե-
ղավորելով առաջին ձայնավորի աջ կողմի վանդակում
և աստիճանաբար իջեցնելով ներքևի վանդակները,
յերեսաներն ստանում և արագ կարդում են փակ
վանկեր:

Յենթադրենք անցնում են «մ» տառը, կստա-
նան ամ, ում, եմ, ում, իմ, քմ փակ վանկերը, վորոն-
ցից 2-ը՝ «ոււմ» և «իւմ»՝ բառեր են.— «մ» գիրքը,
«իւմ» գիրքը: (գծ. 4).

Տեղափոխելով նույն բաղաձայն տառը ձայնա-
վորների ձախ կողմի վանդակները՝ ստանում ենք բաց
վանկեր.— մեա, մո, մե, մու, մի, մը (գծ. 5):

Մի անգամ վանկերն արագ կարդալուց հետո,
յերեսաները նորից կազմում են վանկեր և փորձում
են վանկը լրացնելով, կամ նոր վանկ ավելացնելով
բառեր ստանալ:

Լրացում կարելի յե կատարել բանավոր, կամ
արդեն ծանոթ շարժական տառեր ավելացնելով: Որի-
նակ. վերև հիշված դեպքում բանավոր կերպով վան-
կեր ավելացնելով կարելի յե ստանալ՝ մա+տիտ,
մա+ծուն, մի+սակ, մե+խակ, մո+րեխ բառերը:
(Բանավոր լրացման ժամանակ լրացուցիչ վանկում
կարող են լինել դեռ տառերը չանցած հնչյուններ):

Նույն վանկերին շարժական տառեր ավելացնե-
լով կարելի յե ստանալ՝ մաո, մեւ, մեկ, մուկ, միս,
բառերը (գծ. 6):

	ա	
	ռ	
	ե	
	ա	
	ի	
	լ	

գծ. 3.

	ա	յ
	ռ	յ
	ե	յ
	ա	յ
	ի	յ
	լ	յ

-գծ. 4.

յ	ա	
յ	ռ	
յ	ե	
յ	ա	
յ	ի	
յ	լ	

գծ. 5.

յ	ա	դ
յ	ռ	յ
յ	ե	կ
յ	ա	կ
յ	ի	ա
	լ	

գծ. 6.

(Ձայնավորներն անշարժ են և կարմիր, բաղաձայնները, շարժական, սև):


Յերեսաներն այս ձևով տառերի և հնչյունների սինթեզ կատարելու ունակութուն ձեռք բերելով, կվարժվեն նաև սև տեքստում նախ վորոշել ձայնավոր տառը, հետո միանգամից կարդալ վանկը և բառը:

Գրատախտակի վրա վարժություններ կատարելիս ձայնավորները կարելի չե կարմիր կավիճով գրել: Կարմիր կավիճ ստանալը շատ հեշտ ե: Մովորական կավիճը պետք ե գցել կարմիր թանաքի մեջ և թողնել այնքան, վոր կավիճն ամբողջովին ներկվի, այդ կարելի չե ստուգել կոտրելով կավիճը, հետո պետք ե լավ չորացնել և դործածել:

Ամբողջ դասարանի հետ շարժական տառերով աշխատանք տանելու համար, դասարանում անհրաժեշտ ե ունենալ.

1. Շարժական տառեր, ավելի մեծ չափերով:
2. Տախտակ, շարժական տառերից վանկեր և բառեր կազմելու համար:
3. Գրպանիկներով տախտակ, տառերը պահելու համար:


Բառեր կազմելու տախտակ հնարավոր ե պատրաստել ամեն մի դպրոցում: Կարելի չե պատրաստել դիկտից կամ բարակ տախտակից և ներկել գորշ-յերկնագույն ներկով: Կարելի չե պատրաստել նաև հասարակական, մոմլակից (клеенка), կամ նույնիսկ թղթից: Չափը մոտավորապես «Խորհրդային Հայաստան»



Գծ. 7.

Թերթի մեծուիյունը: Պետք ե 2-3 թերթ ուլայից յեփած խյուսով կպցնել իրար վրա և ներկել: Թերթի յերկարությամբ ամբացնել 3-4 նեղ յերիզ: Վորպեսզի հնարավոր լինի այդ յերիզների հետևը տառեր անցկացնել, պետք ե յերիզի վերևի կողմն ազատ թողնել, իսկ մյուս 3 կողմերը կարել կամ կպցնել թերթին կամ տախտակին. անհրաժեշտ ե այդ ամենը կատարել այնպես, վոր ստացվի ամուր և զեղեցիկ տախտակ: Թերթի 4 կողմն անհրաժեշտ ե սոսնձել նեղ կտոր կամ յերիզ՝ կանտ: Վերևի կողմից պետք ե ամբացնել 2 ողակ տախտակը պատից կախելու համար (գծ. 7):

Շարժական տառերը պահելու համար անհրա-
ժեշտ է պատրաստել նաև գրպանիկներով տախտակ:
Ձափը կես լրագիր: Այդ չափի կտորի կամ հաստա-
ցըրած թղթի վրա պետք է կարել կամ սոսնձել գրպա-
նիկներ, վորոնցից ամեն մեկի վրա գրվում է այն
տառը, վորը պահվում է նրա մեջ (գծ. 8):







ԳՄ. 8.

Ցերկու տախտակն ել կախվում են իրար մոտ,
դասարանի դիմացի պատին, այնպիսի բանձրու-
թյան վրա, վոր յերեխաներն ազատ կարողանան աշ-
խատել շարժական տառերով:

Ցերեխաներն իրենց տառերը պահելու համար
պետք է ունենան գրպանիկներով թղթապանակ
(папка):

Կարելի չէ վերցնել ոգտագործած տետրերի կո-
դեր, յերեք հատ իրար վրա սոսնձել և ծալման տեղը

դրսից յերիզ կպցնել: Կատացվի ծալվող, տետրակի
չափի թղթապանակ: Դրսի կողմից կգրվի յերեխայի
անուն ազգանունը (գծ. 10), իսկ ներսի յերեսին կը-
կարվեն կամ կսոսնձվեն գրպանիկները (գծ. 9): Գրը-
պանիկները կարելի չէ պատրաստել ուղիղ, կամ նա-
մակի ծրարների ձևով: (գծ. 11.):



ԳՄ. 11.

Թղթապանակներ և գրպանիկներ պատրաստե-
լուն կարող են ոգնել և ծնողներն ու մեծահասակ
աշակերտները:



«Ազգային գրադարան»



NL0247864

196

10. 549

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.